

Անցել է ավելի քան տասը տարի, երբ իր գոյությունը դադարեցրեց մարդկության պատմության մեջ ամենահզոր պետական կազմավորումներից մեկը: Տասնհինգ նոր պետություններից տասներկուսը միջպետական հարաբերությունները կարգավորելու նպատակով ստեղծեցին կազմակերպական նոր կառույց՝ Անկախ պետությունների համագործակցություն: Սակայն մեկնարկային տարբեր հնարավորությունները, սոցիալ-տնտեսական վերափոխումների տարբեր արագությունները, պետական կառույցների մեծապես տարբերվող ձևերը, ներքին եւ արտաքին քա-

համեմատ, 2001թ. ընկել էր մոտ 30 անգամ: Ընդհանուր առմամբ՝ ԱՊՀ երկրների միջև առետրի ծավալը այսօր մոտ 2.5 անգամ զիջում է երրորդ երկրների հետ նրանց ապրանքաշրջանառությանը: Անկհայտ է, որ այսօր իրատեսական չէ, եւ սկզբունքորեն չի կարելի խոսել ԽՍՀՄ ժամանակների տնտեսական կապերի վերակենդանացման մասին: Դրա փոխարեն առանձնակիորեն կարելով է ազգային տնտեսությունների բացերի փոխլրացման առկա հնարավորությունների օգտագործումը՝ փոխափոխելով աշխատանքի բաժանման, մասնագիտացման եւ կոոպերացման

Գրիգոր ՂԱՐԻՔՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, ԳՀԱԿ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մարգարիտա ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԱՊԶ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

դաքական տարբեր չափորոշիչները, ըստ եւության, չափահովեցին «Համագործակցության» բովանդակությունը եւ ֆունկցիոնալ նշանակությունը:

Այսօր աշխարհատնտեսական կապերի աստիճանական գլոբալացումը գնալով ստանում է արագացող եւ հետեւողական ընթացք: Այն զգալիորեն ազդում է ԱՊՀ երկրների տնտեսական համագործակցության շրջանակներում ձեռք բերված արդյունքների եւ առկա իրավիճակի վրա՝ միաժամանակ թելադրելով դրանց միջեւ տնտեսական ինտեգրացիայի նոր նպատակների ու ձեւերի անհրաժեշտությունը: Գլոբալացման լիիրավ սուբյեկտ դառնալու համար ԱՊՀ երկրների եւ Համագործակցության ներտնտեսական կապերը ենթադրում են իրատեսական տնտեսական ինտեգրացիոն գործընթացներ: Գաղտնիք չէ, որ ԱՊՀ ձեւավորումը սկզբում ավելի շատ կրում էր քաղաքական ինտեգրացիայի բնույթ, քան տնտեսական: ԱՊՀ երկրների տնտեսական ինտեգրացիայի հեռանկարի շուրջ ոչ իրատեսական պատկերացումները հանգեցրին սրընթաց ապահովագրացման: Իհարկե, վերջին տարիներին այն բավական դանդաղել է՝ որոշակիորեն պայմանավորված ԱՊՀ երկրներում տնտեսական կյանքի աշխուժացմամբ: Ավելացել են արտադրության ծավալները, ինչի հետեւանքով ընդլայնվել է դրանց միջեւ ապրանքաշրջանառությունը: Այնուամենայնիվ, այդ ցուցանիշը տասնյակ անգամ ցածր է 1991թ. համեմատ: Այսպես, Հայաստանի արտահանումը ԱՊՀ երկրներ, 90-ականների սկզբի

հիման վրա: ԱՊՀ շրջանակներում անդամ պետությունների շահերի ներդաշնակության համատեքստում է միայն հնարավոր իրատեսական տնտեսական ինտեգրացիան, որը նրանցից յուրաքանչյուրին թույլ կտա արդյունավետ տնօրինել նյութական եւ ֆինանսական ռեսուրսները, արտադրական ներուժը: Խիստ կարելու է նաեւ այն, որ միայն այդ դեպքում Համագործակցությունը կարող է արդյունավետ օգտագործել գլոբալացման առավելությունները, նվազագույնի հասցնել դրա բացասական հետեւանքները եւ վերջին հաշվով՝ արժանի տեղ գրավել աշխարհատնտեսական համակարգում:

ԱՊՀ անդամ երկրները առայսօր պահպանում են աշխատանքային եւ մտավոր ներուժը: Տնտեսապես ակտիվ բնակչության թիվը հասնում է մոտ 134 միլիոնի: ԱՊՀ աշխատանակ բնակչությունը առայժմ պահպանում է ընդհանուր կրթական եւ մասնագիտական պատրաստվածությունը, որը գլոբալացման առավելությունների օգտագործման եւ ԱՊՀ-ում ինտեգրացիոն գործընթացների զարգացման կարելու գործոն է: Սրա հետ մեկտեղ, Համագործակցությունում պահպանվում է աշխատավարձի շատ ցածր մակարդակը, որը չի ապահովում աշխատանքի վերարտադրության պայմանները: Միջին ամսական անվանական աշխատավարձը 2000թ. Ղազախստանում կազմել է \$94, Ռուսաստանում՝ \$81, Բելառուսում՝ \$74, Հայաստանում՝ \$39, (աշխատողների հաշվարկային անվանական միջին աշխատավարձը

1. Сту` Глобализация экономики, региональная интеграция, под. общ. ред. Н.Д. Подшибякиной, Профиздат, М. 2002, с. 195.
2. Նույն տեղում, էջ 220, Россия в цифрах 2003, М. 2003, с. 27, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003, Երեւան 2003, էջ 71
3. Poghosian G., Migration in CIS, International Organization of migration (IOM) 1996.
4. Сту` Под ред. А. Искандаряна, Миграция на Кавказе (материалы конф., pp: 11-17 лекции), Кавказский институт СМИ, 2003, с. 118.
5. Злотник Х., Тенденции Международной миграции в последней трети XX века, Миграционная ситуация в странах СНГ, М. 1999, с. 22- 23.
6. Статистический сборник стран СНГ, Исполнительный комитет СНГ, М. 2002, с. 18 –20.
7. Экономические преобразования в переходном периоде: теория и результаты, Ред. коллегия А.Г. Аганбегян и др., Е. 1999, с. 317.
8. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003, Երեւան 2003, էջ 43
9. Հաշվարկները կատարված են՝ նույն տեղում, էջ 43
10. Экономика СНГ: 10 лет, реформирования и интеграционные развития, под ред. Шульж, М. 2001, с. 378.

դրամով 2002թ. կազմել է 27324 դրամ, առկա փոխարժեքով՝ մոտ \$50, իսկ Ռուսաստանում՝ նույն ժամանակահատվածում 4413 ռուբլի, այսօրվա փոխարժեքով՝ մոտ \$245)²:

Աշխատավարձի մակարդակը ԱՊՀ բոլոր երկրներում 2000թ. ցածր էր \$100-ից, որը ՄԱԿ-ի գնահատմամբ՝ համապատասխանում է զարգացող երկրների աշխատավարձի մակարդակին: Այս հանգամանքը թերեւս այն կարեւոր գործոններից է, որը պայմանավորում է շատ դեպքերում էժան եւ որակյալ աշխատուժի արտահոսքը արեւմտյան երկրներ՝ մի կողմից, վերազգային կորպորացիաների շահագրգռությունը ԱՊՀ երկրների էժան աշխատուժի նկատմամբ՝ մյուս կողմից:

ԱՊՀ սահմանների թափանցիկությունը, օրենսդրությունների ազատականացումը հանգեցրին բնակչության անօրինական միգրացիայի զգալի աճի՝ հատկապես Չինաստանից, Կորեայից, Աֆրիկայից եւ Ասիայից: Տարբեր մասնագետների գնահատմամբ՝ միջին հաշվով միայն Ռուսաստանում հաշվառվում են 4-5 մլն անօրինական միգրանտներ, ներառյալ ԱՊՀ երկրների քաղաքացիները: 90-ականների սկզբերին Չայաստանից արտագաղթեց մոտավորապես 700 հազար մարդ³: Միգրանտների զգալի մասը հիմնավորվեցին Նախկին ԽՍՀՄ տարածքում, հիմնականում՝ Ռուսաստանում: Նրանցից շատերը թողեցին ՅՅ քաղաքացիությունը եւ բնակությունը, փաստորեն՝ նրանց զգալի մասը առայսօր բնակվում է անօրինական կարգավիճակով: Տնտեսական միգրանտները կամ «հաստերբայտերները» զգալի չափով օգնություն են ցուցաբերում Չայաստանի բնակչությանը: Չնայած այս հանգամանքին, նրանց բացակայությունը խիստ բացասաբար է անդրադարձնում տնտեսության վրա, ըստ էության՝ խիստ արգելակելով միջին խավի ձեւավորումը: Հատկապես վերջին տարիներին ՅՅ-ում հայտնվեցին եւ տարանցիկ միգրանտներ, այդ թվում՝ քուրդ եւ աֆղան փախստականներ, ովքեր ուղեւորվում են Եվրոպա՝ անօրինական ճանապարհով հատելով Չայաստանի սահմանը: Այսօր էլ Չայաստանը օգտագործվում է որպես բուֆերային պետություն, որտեղից տարանցիկ միգրանտները փորձում են անցնել Արեւմտյան Եվրոպա⁴:

Անօրինական միգրացիան, որպես կանոն, ուղեկցվում է մի շարք բացասական երեւոյթներով՝ թմրադեղերի եւ զենքի մաքսանենգություն, քրեածին վիճակի սրում, համաճարակային հիվանդությունների տարածում: Անօրինական միգրացիան մեծապես վնասում է ազգի առողջությանը, վտանգում է ազգի անվտանգությունը:

Սրա հետ մեկտեղ, միգրացիան մարդու՝ որպես աշխատանքի ունակության կրողի գարգացման կարեւորագույն պայմանն է: Նրա գիտելիքներից, մասնագիտական փորձից եւ հմտություններից է մեծապես կախված նոր տնտեսական պայմաններին հարմարվելու հնարավորությունը: Այսօր, երբ ընդլայնվում է աշխատուժի տարածքային, սոցիալական եւ մասնագիտական շարժունակությունը, խիստ աճում է մրցունակությունը ԱՊՀ երկրների աշխատանքի շուկաներում: Այս ամենը պահանջում է համաձայնեցված միգրացիոն քաղաքականության մշակում եւ դրա մեխանիզմների իրացում:

Միգրացիոն գործընթացների կարգավորմանն ուղղված միջոցառումների համալիրը այսօր իրականացվում է՝ ԱՊՀ մասնակից պետությունների աշխատուժի միգրացիայի կարգավորման ընդհանուր աշխատանքի շուկայի փուլային ձեւավորման հայեցակարգին համապատասխան: Այն նախատեսում է միգրացիոն քաղաքականության հետեւյալ հիմնական ուղղությունները.

- տարբերակված միգրացիոն քաղաքականության

իրականացում ԱՊՀ-ի եւ հեռավոր արտասահմանից միգրանտների նկատմամբ,

- անօրինական աշխատանքային միգրացիայի բացասական հետեւանքների նվազեցման ապահովում,

- ԱՊՀ անդամ պետություններում ներքին եւ արտաքին աշխատանքային միգրացիայի գործոնների, հետեւանքների եւ միտումների համալիր գնահատում,

- պայմանագրային սկզբունքներով իրականացվող աշխատանքային միգրացիայի ըստ ամենայնի օժանդակում,

- օրինական աշխատանքային միգրացիայում ընդգրկված աշխատողների սոցիալական եւ աշխատանքային հավասար իրավունքների ապահովում, անկախ նրանց գտնվելու վայրից:

ԽՍՀՄ միասնական ժողովրդատնտեսական համալիրի փլուզումը, ազգամիջյան հարաբերությունների սրումը Եականորեն ազդեցին Նախկին Խորհրդային Միության տարածքում բնակչության միգրացիայի ուղղությունների ու ծավալների վրա: Համագործակցության երկրների տարածքում ժամանակակից միգրացիան բնութագրվում է հետեւյալ հիմնական գծերով.

- մեկ երկրի (նախկին ԽՍՀՄ) ներսում միջհանրապետական միգրացիոն հոսքերի փոխակերպումը միջպետականի՝ ԱՊՀ մասնակից երկրների միջեւ,

- միգրացիայի ընդհանուր ծավալների կրճատում եւ դրա ինտենսիվության նվազում,

- միգրացիայի բնույթի փոփոխություն՝ բնական սոցիալ-տնտեսական միգրացիայի (ուսում, ընտանեկան հանգամանքներ, աշխատավայրի փոփոխություն) բնական չափերի կտրուկ նվազում, հարկադրված միգրացիայի աճ (ազգամիջյան ընդհարումների վտանգ, էթնիկ խտրականություն, Էկոլոգիական վտանգ, արտակարգ իրավիճակներ եւ այլն),

- օրինական աշխատանքային միգրացիայի աննշան չափեր եւ աշխատուժի անօրինական միգրացիայի չափերի աննախադեպ աճ,

- քաղաքաշինության ստագնացիա՝ քաղաքային միգրացիայի շրջադարձ դեպի գյուղական բնակավայրեր:

Սակայն, ընդհանուր առմամբ, միգրացիայի ինտենսիվությունը ցածր է եւ կազմում է Համագործակցության երկրների բնակչության ընդհանուր թվի ընդամենը 3%-ը, որը զգալի ցածր է աշխարհի տնտեսապես զարգացած երկրների համեմատ: ՄԱԿ-ի տվյալներով՝ միայն միջազգային միգրանտների թիվը Արեւմտյան Եվրոպայի երկրներում կազմում է 6.1%, իսկ Յյուսիսային Ամերիկայի տարածաշրջանում (ԱՄՆ, Կանադա) բնակչության 8.6%-ը⁵:

ԱՊՀ երկրների միջեւ միգրացիոն փոխանակման ծավալները ԱՎԾ-ների տվյալներով, ընդհանուր առմամբ, 1990-2002թթ. կրճատվել են գրեթե երկու անգամ՝ կազմելով մոտ 1 միլիոն մարդ: ԱՊՀ-ում առավել ամուր եւ միգրացիոն կապերը ինչպես հարեւան երկրների, իսկ առավել ինտենսիվ՝ Ռուսաստանի եւ ԱՊՀ մասնակից պետությունների միջեւ: Միգրացիոն փոխանակումների արդյունքում, սկսած 90-ականներից, հատուկ տարանջատվում են երկու ժամանակահատվածներ:

Առաջին ժամանակահատվածում (1991-1994թթ.) կտրուկ աճեց Ռուսաստանի դերը՝ որպես միգրացիայի կենտրոն, չնայած Ուկրաինայում նույնպես ձեւավորվեց համանման «ձգող մագնիսական դաշտ»: Այդպիսի կարծիք ձեւավորվել է երկու երկրներում միգրացիաների դրական սալոնների բազմապատիկ ավելացման հետեւանքով⁶: Երկրորդ ժամանակահատվածում (1995-1999թթ.) Ռուսաստանը գործնականում ԱՊՀ-ում դար-

ծավ միակ ընդունող կողմը: Միգրացիոն հոսքերի մեծությունների եւ բնույթի ընդհանուր նկարագիրը ԱՊՀ շրջանակներում հիմք են տալիս երկու հիմնական եզրահանգումների:

● ԱՊՀ-ում կուտակված է միգրացիոն զգալի ներուժ, որը կարող է արդյունավետ իրացվել բարենպաստ հնարավորությունների (աշխատանքի ընդհանուր շուկայի պայմաններ) ստեղծման դեպքում:

● Ռուսաստանում տարածաշրջանային ինտեգրացիայի հետագա ընդլայնումը այն գլխավոր գործոնն է, որը որոշում է ԱՊՀ-ում միգրացիոն հոսքերի մեծությունը եւ ուղղվածությունը:

Միգրացիոն ակտիվությունը բավական վատթարացավ 1998թ. տնտեսական ճգնաժամի արդյունքում, աշխատանքի շուկայի սեղմման հետեւանքով՝ ամենից առաջ փոքր ձեռնարկատիրության ոլորտում: Ռուսաստանի կողմից միգրանտների ընդունման հնարավորությունների սահմանափակումը զգալի կոնսերվացրեց ԱՊՀ-ում ներուժային միգրացիան: Հատկապես տուժեց Կենտրոնական Ասիայի եւ Անդրկովկասի տնտեսապես ակտիվ բնակչությունը:

Այդ երկրներից միգրացիոն հոսքերի առանձնահատկությունն այն էր, որ բացի աշխատանքային բնույթից, միգրացիան կրում էր ընդգծված հարկադիր բնույթ: Դրանցից բացառություն կազմեց Հայաստանը, որտեղից բնակչության միգրացիան 75%-ով պայմանավորված էր զուտ տնտեսական գործոններով:

ԱՊՀ մասնակից պետությունների եւ այլ երկրների միջեւ միգրացիոն փոխանակման ծավալները զգալի փոքր են, քան Համագործակցության երկրների միջեւ, սակայն դրանց գնահատականը կարելուրվում է աշխատանքի ազգային շուկաների իրավիճակը բնութագրելու տեսանկյունից: Դրանց փոխազդեցության միգրացիոն առանձնահատկություններից կարելի է առանձնացնել արտագաղթի կտրուկ ավելացումը ներգաղթի համեմատ: Մյուս առանձնահատկությունը պայմանավորված է ԱՊՀ մասնակից երկրներից, որպես կանոն, բարձր որակավորման կադրերի եւ մասնագետների արտահոսքով:

Համագործակցությունից արտագաղթը կրում է վառ արտահայտված էթնիկ բնույթ, ընդ որում՝ աննշան չափերով: ՀՀ-ում միջպետական միգրացիան, ի տարբերություն ԱՊՀ մյուս երկրների, ցավոք շարունակվում է ընդլայնվող չափերով: Եթե 1998թ. միգրացիայի մնացորդը կազմում էր -7.2 հազ. մարդ, ապա արդեն 2002թ. միգրացիոն աճը կազմեց -9.2 հազ. մարդ⁸: Ընդ որում, առանձնահատկություն է նաեւ այն հանգամանքը, որ եթե 1998թ. մեկնողների ընդհանուր թվում ԱՊՀ երկրներ մեկնողները կազմում էին 92%, իսկ այլ երկրներ՝ 0.8%, ապա արդեն 2002թ. ԱՊՀ երկրներ մեկնողների տեսակարար կշիռը մեկնողների ընդհանուր թվում կազմեց 78% եւ այլ երկրներ՝ 22%⁹:

ԱՊՀ աշխատանքի ընդհանուր շուկայի ձեւավորման գործում առաջնահերթ նշանակություն ունի աշխատանքային միգրացիան, որն իրականացվում է օրինական (ըստ աշխատանքային պայմանագրի) եւ ոչ օրինական եղանակներով: Միանգամից նշենք, որ օրինական (հաշվառելի) միգրացիան խիստ սահմանափակ է: Աշխատանքային միգրանտների հիմնական հոսքը, եւ ընդհանրապես միգրացիան ուղղվում է Ռուսաստան, որը կազմում է ողջ արտասահմանյան աշխատուժի 48%-ը: Հարկ ենք համարում նշել, որ վերջին տարիներին բա-

ցարձակ մեծությամբ կրճատվել է ԱՊՀ երկրներից միգրացիոն հոսքը՝ պայմանավորված Ուկրաինայում, Հայաստանում, Ղազախստանում տնտեսության աշխուժացմամբ, հատկապես՝ շինարարության բնագավառում: ԱՊՀ աշխատանքի շուկայում այլ երկրներից առաջնությունը պահպանում է Թուրքիան, այսուհետեւ Չինաստանը:

Բավական մեծ հիմնախնդիր է դարձել մասնագետների ոչ օրինական միգրացիան: Ոչ օրինական աշխատանքային միգրացիայի չափերի մասին կարելի է դատել հետեւյալ օրինակով. փորձագետների գնահատումներով՝ Հայաստանում 1992-2000թթ. աշխատանքային միգրացիայում ընդգրկվել է բնակչության 14%-ը: Եթե այս մեծությամբ դասենք աշխատունակ բնակչությունը, կստացվի, որ աշխատանքային միգրանտ է հանդիսացել հանրապետության մոտավորապես յուրաքանչյուր չորրորդ բնակիչը: Նման պատկեր արձանագրվել է նաեւ Ուկրաինայում, Տաջիկստանում: Անօրինական միգրացիայի չափերը, վերջին հաշվով, ԱՊՀ-ում չափազանց բարձր են եւ եականորեն ազդում են աշխատանքի ազգային շուկաների վրա¹⁰:

Այսպիսով, նախկին Խորհրդային Միության տարածքում ժամանակակից միգրացիոն գործընթացների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ ԱՊՀ մասնակից պետությունները դեռեւս չեն մշակել միգրացիայի կարգավորման ոլորտում հանաձայնեցված քաղաքականություն: Համագործակցության երկրներում իրականացվող միջոցառումները ամենից առաջ ուղղորդված են աշխատանքի ազգային շուկաների պահպանությանը (քվոտավորում, լիցենզիաների տրամադրում), որը որոշակիորեն սահմանափակում է միգրացիան: Դրանով իսկ չի իրացվում աշխատանքի ընդհանուր շուկայի հիմնական սկզբունքը՝ տնտեսական միասնական տարածքում աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովումը:

Միգրացիայի բնույթը եւ ձեւավորված ուղղությունները չեն նպաստում բնակչության զբաղվածության հիմնախնդրի կարգավորմանը, ԱՊՀ երկրների աշխատանքային ներուժի առավել լրիվ օգտագործմանը: Անօրինական միգրացիայից ստացվող վաստակի չափերը, շատ դեպքերում խեղաթյուրում են ազգային շուկայի իրական վիճակը՝ հաճախ պատճառ դառնալով ազգամիջյան բախումների:

Միգրացիոն գործընթացների դիտարկումը ԱՊՀ տարածքում, անցումային տնտեսության պայմաններում, թույլ է տալիս եզրահանգել, որ ԱՊՀ կազմավորումը նույնպես անցնում է որոշակի փորձաշրջան եւ ունի զարգացման որոշակի հեռանկար: Այսօր Համագործակցության պետությունները կանգնած են համաձայնեցված գործողությունների իրականացման անհրաժեշտության առջեւ, ազգային տնտեսությունների առջեւ ծառայած հիմնախնդիրների ներդաշնակեցման եւ համատեղ լուծելու ճանապարհով՝ արդյունքում ձեւավորելով միասնական տնտեսական տարածք: Այս առումով Համագործակցության ակտիվացման կարելուր ուղղություն կարող է դառնալ ԱՊՀ շրջանակներում այսպես կոչված «սեկտորային» ընդհանուր շուկաների կազմավորումը՝ հատկապես փոխադարձ հետաքրքրություններ կայացնող ոլորտներում, այդ թվում եւ աշխատանքի ընդհանուր շուկայի արդյունավետ գործառնական հնարավորությունները: